

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
28 փետրվարի 2018 թ.

Պետական գրանցման թիվ 12418069

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

21 փետրվարի 2018 թ.

N 102-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐԻՖՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇխԱՏԱԿԱՐԳԸ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ ԲԵՐԱԾ ԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 18-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 5-րդ մասը և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը.

Հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի դիմում-բողոք բերած անձին հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ու ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից ընդունվող որոշման ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի ապրիլի 12-ի «Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի, հանձնաժողովին դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 30-ի N 424-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Վ. Հարությունյան

Հավելված N 1
«Հ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի
2018 թվականի փետրվարի 21-ի
N 102-Ն հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 5-րդ մասին և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն աշխատակարգը կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմնի բողոքարկման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով հանձնաժողովի իրավասությանը վերաբերող դիմում-բողոքների քննարկումն ապահովելու համար:

2. Հանձնաժողովը հարկային և մաքսային մարմնի ընդունած անհատական իրավական ակտերի, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայողների գործողությունների կամ անգործության վերաբերյալ վեճերի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտեի) նախագահի կողմից ձևավորվող, կոմիտեում մշտապես գործող մարմին է:

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրը հարկային և մաքսային մարմնի ընդունած անհատական իրավական ակտերի, հարկային և մաքսային ծառայողների գործողությունների կամ անգործության վերաբերյալ վեճերի լուծման նպատակով ներկայացված դիմում-բողոքների քննարկման, ինչպես նաև օրենքի պահանջների միատեսակ և ճիշտ կիրառման ապահովումն է: Հանձնաժողովի հիմնական գործառնությունը դիմում-բողոքների քննարկումն ու դրա արդյունքում որոշման ընդունումն է:

4. Իր գործունեության ընթացքում հանձնաժողովը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով, Եվրասիական տնտեսական միության և Հայաստանի Հանրապետության՝ մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

5. Վարչական պատասխանատվության կիրառման հետ կապված բողոքարկումը կատարվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան հարկային ստուգում նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի

որոշումը բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

6. Հանձնաժողովը բաղկացած է հանձնաժողովի նախագահից և հանձնաժողովի ութ անդամից, որոնք իրենց աշխատանքը հանձնաժողովում համատեղում են իրենց զբաղեցրած հարկային և մաքսային ծառայության պաշտոնների հետ: Հանձնաժողովն ունի քարտուղար, որը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ:

7. Դիմում-բողոքների քննարկման ընթացքում հանձնաժողովի անդամներն անկախ են, առաջնորդվում են սույն աշխատակարգի 4-րդ կետում նշված իրավական ակտերով և չեն կարող ենթարկվել որևէ ազդեցության:

8. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

3) հաստատում է հանձնաժողովի նիստի օրակարգը և կազմակերպում նիստերի անցկացումը.

4) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և վարում է դրանք.

5) պատասխանատու է Հայաստանի Հանրապետության օրենքներին ու սույն աշխատակարգին համապատասխան հանձնաժողովի գործառույթների իրականացման համար:

9. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է հանձնաժողովի անդամներից մեկը:

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ընդունում է ստացված դիմում-բողոքները, ստուգում է դրանց ներկայացման համար օրենքով սահմանված պահանջների պահպանված լինելը,

2) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝

ա. հավաքում է դիմում-բողոքների վերաբերյալ կոմիտեում առկա անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը,

բ. նախապատրաստում և հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգը,

գ. դիմում-բողոքները դրանց կից փաստաթղթերով ներկայացնում է հանձնաժողովի անդամներին ծանոթացման,

գ. կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

դ. իրականացնում է նիստերի մասնակիցների հրավիրման, ծանուցագրերի ուղարկման և հանձնաժողովի գործունեության ապահովման հետ կապված այլ աշխատանքներ:

11. Հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքները քննության են առնում և դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում դիմում-բողոքը կոմիտեում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում: Առանձին դեպքերում կոմիտեի նախագահի որոշմամբ սույն կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, որի մասին իրազեկվում է դիմումատուին:

12. Հանձնաժողովը վարույթ է ընդունում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասին և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան ներկայացված դիմում-բողոքները: Հանձնաժողովի քարտուղարը դիմում-բողոքները կոմիտեում մուտքագրվելուց հետո ստուգում է դրանց ներկայացման

համար օրենքով սահմանված պահանջների պահպանված լինելը և ոչ լիարժեք ներկայացված դիմում-բողոքների մասով զեկուցում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի կողմից՝

1) դիմում-բողոք բերած անձին գրավոր տեղեկացվում է դիմում-բողոքում առկա թերությունների մասին և առաջարկվում է վերացնել դրանք՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում թերությունները վերացնելու և հանձնաժողովին տեղեկացնելու դեպքում դիմում-բողոքը համարվում է ընդունված այն առաջին անգամ ներկայացնելու օրվանից,

2) թերություններով ներկայացված դիմում-բողոքն ընդունվում է վարույթ, եթե այդ թերությունները չեն խոչընդոտում բողոքի հետագա քննությանը:

13. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են նախագահի կողմից՝ դիմում-բողոքների առկայության դեպքում:

14. Հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նիստից առնվազն երկու օր առաջ, դիմում-բողոքները, դրանց վերաբերյալ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ու տեղեկատվությունը ներկայացնում է հանձնաժողովի անդամներին՝ ծանոթացման:

15. Դիմում-բողոքը հանձնաժողովի կողմից քննարկման ընդունելու դեպքում դիմում-բողոք բերած անձը նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին: Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-բողոք բերած անձը, վերջինիս գլխավոր հաշվապահը և (կամ) դիմում-բողոք բերած անձի լիազորած անձը (մասնագետը): Հանձնաժողովի նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին տեղեկացված՝ դիմում-բողոքը բերած անձի կամ նրա ներկայացուցիչների բացակայությունն արգելք չէ հանձնաժողովի նիստը շարունակելու և վեճն ըստ էության լուծելու համար:

16. Դիմում-բողոքները հանձնաժողովում քննարկվում են կոլեգիալ կարգով: Հանձնաժողովի որոշումներն իրավազոր են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է առնվազն 7 հոգի: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնության ձևով: Հավասար ձայների առկայության դեպքում նախագահի ձայնը որոշիչ չէ, և եզրակացությունը համարվում է ընդունված դիմում-բողոք ներկայացրած անձի օգտին:

17. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Նախապես հանձնաժողովին տեղեկացնելով և դիմում-բողոք բերած անձի համաձայնության դեպքում նիստերին կարող է մասնակցել ցանկացած անձ, այդ թվում՝ զանգվածային լրատվության, հասարակական կազմակերպության ներկայացուցիչ: Հանձնաժողովի նախագահի որոշմամբ հանձնաժողովի նիստերը կարող են տեսագրվել (ձայնագրվել): Հանձնաժողովի նիստերը կարող են լինել դռնփակ՝ դիմում-բողոք ներկայացրած անձի գրավոր միջնորդության հիման վրա հանձնաժողովի նախագահի կայացրած որոշմամբ՝ օրենքով սահմանված առևտրային կամ այլ (այդ թվում՝ հարկային) գաղտնիք պահպանելու նպատակով:

18. Անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովն իր նիստերին կարող է հրավիրել բողոքարկվող գործողություն կատարած, անգործություն դրսևորած կամ որոշում կայացրած կամ ակտ կազմած հարկային և մաքսային ծառայողների:

19. Հանձնաժողովի նախագահը կարող է կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել և ստանալ մասնագիտական եզրակացություն դիմում-բողոքի քննարկման համար նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ դատական նախադեպի առկայության կամ բացակայության մասին:

20. Հանձնաժողովը դիմում-բողոքների քննության արդյունքում իրավասու է ընդունելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 76-րդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 293-րդ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 443-րդ և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածներին համապատասխան որոշումներ՝

1) դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասով և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով սահմանված դեպքերում.

2) դիմում-բողոքը բավարարելու մասին.

3) դիմում-բողոքը մասնակի բավարարելու մասին.

4) դիմում-բողոքը մերժելու մասին.

5) վերստուգում անցկացնելու մասին (համալիր հարկային ստուգում իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունները վերադասության կարգով բողոքարկվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով):

21. Օրենքով սահմանված ժամկետում դիմում-բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում դիմում-բողոքը բավարարելու մասին հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված:

22. Հանձնաժողովը դիմում-բողոքների քննարկման արդյունքում իրավասու է միջնորդություն ներկայացնելու կոմիտեի նախագահին՝

1) հետբացթողումային (այդ թվում՝ կրկնակի) հսկողության գործընթաց սկսելու համար.

2) հարկային և մաքսային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու համար.

3) դիմում-բողոքի քննության և դրա վերաբերյալ որոշում ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը երկարաձգելու մասին:

23. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, և կազմված արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները: Հանձնաժողովի անդամների ստորագրած արձանագրությունները պահպանվում են կոմիտեում այն կազմելու տարվան հաջորդող երեք տարվա ընթացքում՝ կոմիտեի նախագահի սահմանած կարգով:

24. Հանձնաժողովի ընդունած որոշումը կազմվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը որոշումը կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրվում է դիմում-բողոք բերած անձին, իսկ երկրորդ օրինակը պահվում է կոմիտեում: Դիմում-բողոքների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները ենթակա են կատարման օրենքով սահմանված կարգով: Հանձնաժողովի որոշումները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կարող են բողոքարկվել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով կամ դատարան:

(բողոք բերողի պահանջը)

(բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը)

(բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը)

(բողոք բերող անձի ստորագրությունը, կազմակերպության դեպքում՝ նրա անունից
բողոք բերող անձի ստորագրությունը, կնիքը՝ առկայության դեպքում)

Հավելված N 3
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի
2018 թվականի փետրվարի 21-ի
N 102-Ն հրամանի

ՁեՎ

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ
ԲԵՐԱԾ ԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՅՐԻ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ
ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ**

ք. Երևան _____ 20__ թ.

(դիմում-բողոք բերող անձի անունը, ազգանունը, հասցեն)

Սույնով ծանուցվում եք Ձեր _____ ներկայացրած դիմում-բողոքի քննության հարցով
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նիստին մասնակցության համար:
Որպես լիազորված անձ (մասնագետ) կարող է ներգրավվել Ձեր կողմից գրավոր լիազորված
ցանկացած անձ, այդ թվում՝ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ: Նիստին
մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված
անձի դեպքում՝ նաև լիազորագրով:

Նիստի անցկացման վայրը՝ ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7

Նիստի անցկացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Հավելված N 4
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի
2018 թվականի փետրվարի 21-ի
N 102-Ն հրամանի

ՁեՎ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N _____

ք. Երևան

_____ 20__ թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը, քննության առնելով

_____ դիմում-բողոքը՝

ՊԱՐՁԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ դատարան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)